

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հասարակական-փիլիսոփայական միտքը Հայկական Կիլիկիայում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979, 176 էջ:

Վերջին տասնամյակներին նկատելի աշխուժություն է տիրում Կիլիկիայի պատմության ուսումնասիրման բնագավառում: Հայաստանում և արտասահմանում յույս են տեսել Հայկական Կիլիկիայի պատմությանը վերաբերող մի շարք մենագրություններ և սկզբնաղբյուրներ, որոնցից առաջինը Գ. Միքայելյանի աշխատությունն է, նվիրված Կիլիկյան հայկական պետության ընդհանուր պատմությանը<sup>1</sup>: Այնուհետև հաջորդաբար հրատարակվեցին Ա. Հովհաննիսյանի<sup>2</sup>, Ա. Սուրիասյանի<sup>3</sup>, Ս. Բոռնադյանի<sup>4</sup>, Հ. Հելլենկեմպերի<sup>5</sup>, Տ. Ս. Ռ. Բուասի<sup>6</sup>, Պ. Բեդուկյանի<sup>7</sup> և այլոց ուսումնասիրությունները, որոնցում արծարծված են Կիլիկահայության սոցիալ-տնտեսական հարաբերությունները, իրավունքի պատմությունը, խաչակրաց արշավանքների շրջանում Կիլիկիայի և մյուս պետությունների դիվանագիտական կապերը, հարտարապետական կառույցները և այլն:

Հետազոտությունների այս շարքը լրացնելու է գալիս Գ. Գրիգորյանի սույն մենագրությունը, նվիրված Կիլիկահայ հասարակական-փիլիսոփայական մտքի երեք առաջատարներին՝ Ներսես Շնորհալույս, Գրիգոր Տղային և Ներսես Լամբրոնացուն: Ներածության մեջ հեղինակը ներկայացնում է իր պրպտումների արդյունքները. «Մեր պրպտումները բերել են այն համոզման,— պրում է նա,— որ Շնորհալին, Գրիգոր Տղան և Լամբրոնացին միևնույն սկզբունքների պաշտպանն են եղել... Եվ դա ոչ թե երկրորդական, այլ հասարակական-քաղաքական սկզբունքային հարցերին է վերաբերում: Նշված գործիչները տողորված են եղել դավանարանական-կրոնական հանգամանքները ազդին ու հայրենիքին ծառայեցնելու գաղափարով՝ դրանով առհասարակ դուրս գալով սոսկ եկեղեցուն ու կրոնին ծառայող հոգևորականի նեղիկ պատյանից» (էջ 6): Սա գրախոսվող մենագրության ամենակարևոր եզրակացություններից է:

Ցույց տալու համար, որ Կիլիկիայի գործիչները հաճախ են առիթ ունեցել դուրս գալու «հոգևորականի նեղիկ պատյանից», Գ. Գրիգորյանը բերում է համապատասխան փաստեր և ընթերցողին համոզում իր ասածում: Այդ փաստերից մեկը, ի դեպ, վերաբերում է Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականին: Հստակ է, որ ինչպես հայ, այնպես էլ օտար քրիստոնեական եկեղեցիներում երգվող կանոնակարգի երգերի նյութը վերցվում է գերազանցա-

<sup>1</sup> Г. Г. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952.

<sup>2</sup> A. Howhannessian, Cilician Armenia and the Crusades, Detroit, 1958.

<sup>3</sup> А. Г. Сукнасян, История киликийского армянского государства и права (XI—XIV вв.). Ереван, 1969: նույնը հայերեն՝ Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (հայերեն թարգմանության կազմի վրա գրված է «Ա. Ս. Սուրիասյան» փոխանակ՝ «Ա. Գ. Սուրիասյան»):

<sup>4</sup> Ս. Վ. Բոռնադյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973:

<sup>5</sup> Hansgerd Hellenkemper, Burgen der Kreuzritterzeit In der Grafschaft Edessa und Im Königreich Kleinarmenien, Bonn, 1976.

<sup>6</sup> The Cilician Kingdom of Armenia, editet by T. S. R. Boasa, London, 1978.

<sup>7</sup> Paul Z. Bedoukian, Coinage of Cilician Armenia. Danbury, Connecticut, 1979 (առաջին հրատարակությունը՝ 1962 թ.):

պես ճամբարիստոնեական մատենադրությունից ու ավանդություններից: Սրա փոխարեն ներսևս Շնորհալին հիշյալ շարականում փառաբանում է Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ Ալսուրայրի ճակատամարտում տեղի ունեցած հերոսամարտը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Մ. Նալբանդյանը Շնորհալու շարականները կոչում է «հոգևոր շարականներ»<sup>8</sup>:

Երևք գործիչների միևնույն սկզբունքների պաշտպան լինելու մասին Գ. Գրիգորյանի նշած փաստերին պետք է ավելացնել նաև լեզվի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը: Թվում է, հայոց եկեղեցու ազդեցիկ հեղինակությունները պետք է խուսափեին ժամանակի աշխարհարարից և իրենց գործերը շարադրեին միայն Աստվածաշնչի ավանդական գրաբարով, որով առաջնորդվել են հինգերորդ և հաջորդ դարերի մատենագիրները: Սակայն ներսևս Շնորհալին իր հորինած չափածո հանելուկները շարադրել է խոսակցական լեզվով: Գրիգոր Տղան Մխիթար Հերացուն հանձնարարել է գրել «Ջերմանց մխիթարությունը», որը նույնպես շարադրված է ժամանակի աշխարհարարով: Իսկ ներսևս Համբրոնացին Քաղաքացիական օրենքների ժողովածուն հունարենից թարգմանելիս շեղվել է Ատենաբանության ճարտասանական ոճից և գրել շատ պարզ լեզվով: Բավական է հիշենք «Հոգեբարձ որ է պիտոբոս» խորագրի տակ նրա զետեղած ժԳ օրենքը<sup>9</sup>, ինչպես նաև մի երկու արտաօայտություն («Եթէ ոք առնէ տուտ, որ է մահր ըստ արապկաց, և ըստ հայոց՝ անձին գին աղեկան», «Եթէ դստերաց ազգս հատեալ է՝ թուէր որդիքն մտանեն յամենայն ազգականութիւն»<sup>10</sup>) և ակնհայտ կղտունա, որ Համբրոնացին ձգտել է օտար լեզուներից թարգմանված օրենքները շարադրել ախպես, որ հասկանալի լինեն նաև հասարակության ստորին խավերին, տեղայնանան, դառնան հայկական:

Այս փաստերի առկայությամբ ավելի բան խոտելի է դառնում այն մտածողությունը, որի համաձայն՝ Համբրոնացին իր օրենքները հունարենից թարգմանել է հայերի մեջ օտար կողմնորոշում «ժողովրդայնացնելու» դիտավորությամբ: Ահա այդօրինակ մտածողության մի դրսևորում. «Հունական օրենքների թարգմանությունը Համբրոնացու արևմտյան կողմնորոշման արտաօայտություններից մեկն էր ու դրսևորումը նաև, որով նա փորձում էր ժողովրդայնացնել, ուրեմն և, ընդհանուր ուժ տալ այդ կողմնորոշմանը»<sup>11</sup>: Սույն դատողության հեղինակը մոռացել է, որ Մխիթար Գոշի Գատաստանագիրքը նույնպես ամբողջապես ներծծված է թարգմանական օրենքներով և կանոններով: Եվ եթե առաջնորդվենք թարգմանական օրենքները որպես օտարամտության նշան դիտելու մտքով՝ օտարամտուներ կդառնան ոչ միայն Համբրոնացին և Մխիթար Գոշը, այլև իրավաբանական մտքի բազմաթիվ երախտավորներ, պետական գործիչներ: Վերջիններիս շարքում կհայտնվի նույնիսկ այնպիսի մի գործիչ, ինչպիսին է վրաց Վախթանգ Զ արքան, որը փոխանակ իր իրավաբաններին հրամայելու «միայս վրացական» օրենքներ ստեղծել, հանձնարարել է նաև հայերենից թարգմանել Մխիթար Գոշի Գատաստանագիրքը և այլ օտար օրենքներ: Գ. Գրիգորյանն իրավացիորեն քննադատում է թարգմանական օրենքների մասին սխալ կարծիք տարածողներին և ցույց է տալիս, որ հունական օրենքները Կիլիկիայում թարգմանվել են ոչ թե թարգմանչի անձնական քմաճուրդով, այլ ընդհանուր հասարակության խնդրանքով, քրավարարելու համար հասարակության կողմից առաջադրված «բատապ պահանջը» (էջ 164):

Կիլիկահայ հասարակական-փիլիսոփայական միտքը գոյացել ու տևել է քաղաքական բարդ պայմաններում, ուստի նրան նվիրված յուրաքանչյուր աշխատության հեղինակ անխուսափելիորեն կանգնում է այդ պայմանները վերլուծելու և գնահատելու անհրաժեշտության առջև: Ի պատիվ գրախոսվող աշխատության հեղինակի պետք է ասել, որ նա հաջողությամբ է կատարել իր առաջադրանքը: Եթե ուսումնասիրողներից ոմանք հայ, բյուզանդական, լատինական եկեղեցիների փոխհարաբերությունները քննելիս Շնորհալուն և մյուսներին հատկացրել են օտար եկեղեցիներին հեշտությամբ գիշումներ կատարողների գերը, Գ. Գրիգորյանը, ընդհակառակը, իրական փաստերով ցույց է տալիս, որ հայ մտածողներին առաջնորդողը միշտ

<sup>8</sup> Մ. Նալբանդյան, Եժժ, հ. I, Երևան, 1945, էջ 484:

<sup>9</sup> «Քաղաքացիական օրենք ներսխի Համբրոնացու ըստ Կոստանդիանոսի, Քննադատ և Առնի՝ Սազաուրաց Հոռովմայիցուց», հրատարակեց Կ. Յ. Բասմաչյան, Պարիզ, 1907, էջ 19:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատախրությամբ ևոսրով Քորոսյանի, Երևան, 1975, էջ 62:

էլ Էղեւ է ազգային Եկեղեցո՝ ինքնուրույնության զազափարը: Բյուզանդական կայսր Կիո Ման-մէլին ուղղված նամակում նա պահանջում է Եկեղեցիների մերձեցման նպատակով սկսվելիք բանակցությունների ժամանակ ապահովել մասնակիցների հավասար վիճակ. «թող չլինի այնպես, թե սերը ծառայի մոտ է կամ ծառան տերերի» (էջ 126):

Մենք շատ կարեւոր ենք համարում Գ. Գրիգորյանի հետևյալ եզրակացությունը. «Շնորհային բանակցություններ է վարում Բյուզանդիայի հետ ոչ թե Եկեղեցիների միության հաստատման, այլ փոխմիջոցառման ու բարեկամական հարաբերությունների հաստատման համար: Պետք է որոշակիորեն տարբերել միության փոխմիջոցառումը» (էջ 130):

Մ. Նալբանդյանը ժամանակին նկատել է, որ «սուրբ Դերսես Շնորհայու ժամանակ, ինչպես նաև նորա եղբայր Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, իսկ նաև Մանվել կայսրը, շատ և շատ ցանկանալով հայոց Եկեղեցու հունաց հետ միավորության, բայց էլ մի շարունակ դավանաբանական գրագրություն այս առարկայի վերա»<sup>12</sup>, Ընդգծված բառի վրա ուշադրություն դարձրելով, Գ. Գրիգորյանը գրում է. «Հետաքրքրական է, որ ղեկավար Միքայել Նալբանդյանն է նկատել, որ բանակցությունների նախաձեռնությունը պատկանում է ոչ թե հայերին, այլ իտյաններին» (էջ 127):

Ուշադիր հետազոտողը չի կարող չնկատել, որ նույնիսկ այն դեպքում, երբ Շնորհային ուսյո սները այս կամ այն կերպ համաձայն են իտյանների առաջարկած միությանը՝ նրանք որպես կանոն վկայակոչում են վաղ Երեսուցեությունը շրջանի այն հեղինակավոր Եկեղեցական գործիչներին, որոնք հանդես են եկել Եկեղեցիների համերաշխության օգտին: Դրանով հայատաժողները կամեցել են ասել, որ իրենք կողմնակից են այդպիսի միության և ոչ թե իտյանական Եկեղեցու գերիշխանության<sup>13</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանի համար բնութագրական են նաև կիլիկյան մտածողների և բուն Հայաստանի նշանավոր վարդապետների միջև մղված վեճերը: Գ. Գրիգորյանն այդ կատակցությանը գրում է. «Մենք մտածում ենք, որ այդ երկու խմբավորումները չի կարելի տարբերել հասարակական-քաղաքական ուղղություն համարել, կամ՝ այդ պետք է անել թերևս շատ մեծ մեղադրությամբ: Բանն այն է, որ այդ, այսպես կոչված, երկու հակառակ շարժումներին, «կուսակցությունների» վեճը հիմնականում ու գլխավորապես անբարենորոգականության նշանակում է» (էջ 165):

Այն հարցին, թե ինչու էին «երկու հակառակ շարժումներին» ներկայացուցիչները բյուզանդացիների հետ բանակցություններ վարելու հարցում տարբեր դիրքեր զբաղում, Գրիգորյանը պատասխանում է. «Այս հարցին պատասխանելիս պետք է ամեն բանից ազդի առնել երկու կողմերի քաղաքական կացության տարբերությունը. սխառմական այն հանգամանքները, որոնցում ապրում էին նրանք» (էջ 141): Երկու կողմերն էլ իրականում «հակված չեն եղել բարեկամության հաստատել Բյուզանդիայի հետ ի հաշիվ այն Եկեղեցու... ինքնուրույնության» (էջ 141):

Գրիգորյանն իր տեսակետները հիմնավորել է անհրաժեշտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ: Վերջիններս, սակայն, որքան էլ որ հիմնականում ճիշտ են մեկնաբանված, այնուամենայնիվ գրախոսողին չեն զրկել դիտողություն անելու նախադրությունից: Կարևոր դիտողություններից մեկը վերաբերում է Գրիգոր Տուսեղորդու նամակին: Այստեղ հանդիպող «զամենայն այլազգիս» բառերը թարգմանված են «բոլոր ազգերին», այն դեպքում, երբ նամակում խոսքը ոչ թե բոլոր ազգերի, այլ միայն այլազգիների, այսինքն՝ ոչ քրիստոնյաների մասին է: «Ճղեկաց» (այսինքն՝ «զղեկաց», որը նշանակում է «զղյակներին») բառը սխալմամբ վերձանվել է «տեղաց» և թարգմանվել է «տեղիս: Այնուհետև. «մի՛ ցուպ, մի՛ գաւազան, մի՛ պարկ է մի՛ պարեգոտս» բառերը, որ նշանակում են «ոչ ցուպ, ոչ գավազան, ոչ պարկ և ոչ պարեգոտ», Գ. Գրիգորյանը թարգմանել է հակառակ իմաստով. «ունենալով մի ցուպ, մի գավազան, մի պարկ և վրայի մի զգեստ» (էջ 147—148): Այս թարգմանությունների նշանակումով նասակի լուսնակությունը հեռացել է իրական իմաստից:

Քաղաքացիական օրենքների հիշատակարանում գործածված «ոյր Իսմայելացուցն էին իշխան, ի քաղաքս և զատաւորք՝ զգատ հայաստանեսայցս ոչ դատէին» նախադասությունը թարգմանված է. «Իսմայելցիներին ևնթակա քաղաքներում դատավորները հայաստանցիների օրենքներով չէին դատում» (էջ 163): Ստացվում է այն տպավորությունը, թե գոյություն ունենին

<sup>12</sup> Մ. Նալբանդյան, ԵԺ, հ. 1, էջ 482:

<sup>13</sup> Հմմտ. «Синодальное слово Нерсеса Ламбронского», перевел с армянского Н. Эмнн. М., 1865, էջ 17:

այաստանցիների համար նախատեսված առանձին օրենքներ, որոնք, սակայն, իսմայելցիներին ենթակա քաղաքներում չէին կիրառվում: Այնինչ իրականում նման օրենքներ գոյություն չունեին, և Համրոնացին քաղաքացիական օրենքների մոզոգածուն կազմեց ՚ենց այդ օրենքների բացակայությունը յրացնելու համար: Հիշատակարանում պարզապես ասված է, որ քաղաքներում դատավորներն ու մահմեդական իշխանները հրաժարվում էին հայերին դատելուց: Ըստ որում, «հայաստանեայքս նշանակում է ոչ թե «հայաստանցիներս», այլ առաստարակ հայեր»:

Գիտելիքի կական մտածողության ճեղքեր որոնելիս Գ. Գրիգորյանը ուշադրություն է դարձրել նաև Համրոնացու հետևյալ խոսքին. «Մի անասնոյ պատահէ զենումն և միսոյն՝ զնոյն պատահէ ուտել, զմի թռչունն ձեռնասուն առնեն թագաւորք և պատեն, և զմինն առաջի նորա խոցանեն ըմբռնել» (էջ 59): Սույն հատվածի իմաստը հետևյալն է. կենդանիներից մեկին վիճակված է մորթվել, իսկ մյուսին՝ մորթվածին ուտել, թռչուններից մեկին թագավորներն ընտելացնում են և պատվում (խոսքը բազմի մասին է), իսկ մյուսին թուցնում են այդ վարժեղվածի դիմաց, որպեսզի սա թուցվածին բռնի, իսկ Գ. Գրիգորյանը թարգմանել է. «Մի կենդանու պատահականության բերումով մորթում են զոհելու, մյուսին՝ նույն պատահականությամբ ուտելու նպատակով, մի թռչունի թագավորները ձեռնասուն են դարձնում և պատվում են, իսկ մյուսին ՚ենց նրա աչքի առաջ սպանում են» (էջ 59): Ինչպես տեսնում ենք, բնագրի և թարգմանության իմաստները տարբեր են:

Հին տիեզերագիտական պատկերացումների համաձայն, Երկիրը հողմերին քսվելով՝ հողմնաձարվում, մաշվում, սպառվում է և ապա նորից շրջան կազմելով նորոգվում: Համրոնացին այս պատկերացումը համարում է անմիտ բացառություն. «Սու ի մերս ժամանակ բաշաղեցին բազումք. թէ երկիր հողմով անցանէ և շրջան առնայ նորոգի» (էջ 52): Այստեղ «հողմով անցանէ» նշանակում է «հողմից ոչնչանում է (անհետանում)»: Այնինչ՝ Գ. Գրիգորյանը թարգմանել է. «հողմերի շնորհիվ պտտվում է»: Գրաբար «շրջան առնայ նորոգի» նշանակում է «շրջան կատարելով նորոգվում է», իսկ Գ. Գրիգորյանը թարգմանել է. «շրջան կատարելով կրկնում է նույնը», այսինքն՝ նորից պտտվում է: Այսպիսով՝ Գ. Գրիգորյանի թարգմանության համաձայն երկիրն անընդհատ պտտվում է, իսկ նրա սպառման ու նորոգման մասին խոսք չկա:

Աշխատության մեջ նկատելի են գրաբար քաղվածքներում տեղ գտած օլոգագրական վրիպակներ (էջ 48, 49, 51, 52, 55, 59, 65, 75—79, 81, 83, 99, 104, 106, 110, 135, 140 և այլն): Սրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք ընկալվում են որպես ոչ թե վրիպակներ, այլ ուղիղ ընթերցվածքներ և դրանով ավելի են ազձատում քաղվածքների իմաստը: Բերենք դրանցից մի Երկուսը (փակագծերի մեջ նշում ենք ձեռագրում գտնվող ճիշտ բառերը). «Արիտոտելի գիրսն» («Արիստոտելի գիրսն») (էջ 42, ծան. 9), «Ժնածին» («Ժնանին») (էջ 43, ծան. 11), «պարծասցի» («պանծասցի») (էջ 50, ծան. 22), «յառաջնոյն» («յառաջնոցն») (էջ 51, ծան. 22), «պկնի մեր կան» («պկնի մեր գան») (էջ 52, ծան. 24) և այլն:

Նշված վրիպակները զուտ մասնակի թերություններ են, որոնք չեն ազդում արձեռագրի այս աշխատության ընդհանուր գեահատականի վրա:

ԳԵՎՈՐԿ ԱՐԿԱՐՅԱՆ

Քանախրական գիտությունների դոկտոր